

100 Հարց Ս.

Հաղորդութեան Մասին

Հարցեր Եւ Պատասխաններ 22) Ըսել կ'ուզէք, որ ուղղափառ հաւատքի խոստովանութիւնը անհրաժեշտ պայման է Ս. Հաղորդութիւն ստանալու համար:

Այո՛: Այս է պատճառը, որ հաւատքի համառօտ մէկ խոստովանութիւնը բաշխելէ առաջ բարձրաձայն կ'ըսուի. «Ըսէ՛ք մեղանջեցի Աստուծոյ դէմ: Կը հաւատանք հօրը՝ իբրեւ ճշմարիտ Աստուած. կը հաւատանք որդիին՝ իբրեւ ճշմարիտ Աստուած. կը հաւատանք Ս. Հոգիին՝ իբրեւ ճշմարիտ Աստուած: Որովհետեւ սա է մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի կենդանի եւ կենդանարար մարմինը եւ Արիւնը, որ մեր մեղքերու քառութեան եւ թողութեան համար է: Կը խոստովանինք եւ կը հաւատանք»:

23) Ի՞նչ կ'ըսէ Ս. Յովհան Մանդակունին (478- 490) սրբագործուած հացի եւ գինիին՝ Տիրոջ իրական մարմինը եւ Արիւնը ըլլալու մասին:

Երանելի Հայրապետը իր ճառերէն մէկուն մէջ այս հարցին վերաբերեալ յստակ կը նշէ. «Եւ մենք ճշմարիտ հաւատքով կը հաւատանք, որ Քրիստոս է սեղանի վրայ. անոր կը մօտենանք, զինք կը տեսնենք, կը շօշափենք, կը համբուրենք, մեր ներսը կ'ընդունինք եւ կը դառնանք մարմին, անդամ եւ Աստուծոյ որդիներ:

... Շարունակելի

Ի՞նչ է մահը

Քրիստոս իր մահով էր, որ բացաւ անմահութեան դուռը: Քրիստոսի մահով էր, որ մենք դարձանք անմահ Աստուծոյ անմահ զաւակները: Քրիստոսի մահով, մահը դադարեցաւ յուսալքութեան առիթ ըլլալէ եւ դարձաւ կենդանարար Յոյսին բացուելու գեղեցկագոյն առիթ: Ինչպէս իւրաքանչիւր սենեակ իր սեմը ունի, այնպէս ալ երկինքը իր սեմը ունի, որ նոյնինքն մահն է: Այս կեանքը երազ մըն է: Երկրաւոր կեանքի ասարտին կայ մահը, որ կ'օգնէ մեզի արթննալու երազէն: Մահը փոխադրամիջոց մըն է՝ աշխարհէն դէպի աշխարհի Փրկիչը: Մահը երկրի կեանքը երկինքի կեանքին կապող օղակն է: Մահը երկրի էջը դարձնել եւ երկինքի էջը բանալ մըն է: Սիրելի՛ ընթերցող, կը մտաբան, որ քեզի համար ալ մահը նոյնը ըլլայ:

ԱՌԱԿ 8

Իմ խօսքերս արդար են, անոնց մէջ ծուռ եւ սխալ բան չկայ: Իմաստութիւններուն համար ամէն ինչ ուղիղ է եւ շիտակ անոնց համար, որոնք գիտութիւն կը գտնեն»:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԾԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ՃՐԱԳ

ԹԻՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Թ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2016 ԹԻՒ 43

ԳԻՏ ԽԱՉԻ

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՆԵՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Իմաստ. 14.1-8: Ես.33.22-34.1 Ա. Կրթ. 1.18-24: Յիսուս Քրիստոսի Աւետարանէն ըստ Մտ. 24.27.36

Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը լուսաւորէ ամբողջ երկնակամարը, արեւելքէն արեւմուտք: Արժիւնները կը հաւաքուին հոն՝ ուր դիակ կայ: Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի. երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ահա մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան՝ երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ գօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ՝ որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թզենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղանան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարւին, գիտցէ՛ք թէ մարդու Որդին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան: Սակայն ո՛չ որ գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը:

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ ԱՌԱԿԱՑ (Գ. 23, 19-25)

Որդեալ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ ֆու սիրտդ դէպի ուղիղ նամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլներուն ու իրենց մարմինը մաշողներուն, վասն զի գինեմոլն ու շոռայլը աղբատ կ'ըլլան եւ շատ ֆուճը՝ պատոտած հանդերձներ կը հագցնէ:

Հնազանդէ՛ մօրդ, որ ֆեզ ծներ է, ու մի՛ անարգեր ֆու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ն ու զանկկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, իրատն ու հանճարը:

Արդարին հայրը շատ պիտի ցնծայ եւ իմաստուն գաւակ ծնանողը անոր համար պիտի ուրախանայ: Թող ֆու հայրդ ու մայրդ ֆու վրադ ուրախանան ու ֆեզ ծնանողը թող ցնծայ:

ԳԻՒՏ ԽԱՉԻ



Քրիստոնեական տօներուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ Գիւտ Խաչի տօնը: 313 թուին, Միլանոյի հրովարտակով, երբ քրիստոնեաներուն արտօնուեցաւ ազատօրէն պաշտել նոր կրօնը՝ քրիստոնէութիւնը, Երուսաղէմը դարձաւ քրիստոնեաներուն ուխտավայրը: Աշխարհի չորս կողմէն քրիստոնեաներ ուխտի կ'երթային Երուսաղէմ:

327 թուականին, այս ուխտաւորներուն մէջն էր նաեւ Կոստանդիանոս Կայսեր մայրը՝ Հեղինէ թագուհին: Ան կ'ուզէր գտնել Յիսուսի խաչափայտը, որ կորսուած էր: Ուստի ան բարձրացաւ Գողգոթա լեռը, որ այն ժամանակ կը գործածուէր իբրեւ աղբատեղի:

Հեղինէ թագուհին պեղել տուաւ այն տեղը, ուր կ'ենթադրէին գտնել Յիսուսի խաչափայտը: Անոր ենթադրութիւնը ճիշդ դուրս եկաւ եւ փորուած տեղէն ի յայտ եկան երեք խաչափայտեր: Գիտնալու համար, թէ ո՞րն է Յիսուսի խաչափայտը, իւրաքանչիւրը առանձնաբար դրին մեռած մանուկի մը դիակին վրայ: Երբ Յիսուսի խաչափայտը մօտեցուցին մանուկին, ան յարութիւն առաւ: Այսպիսով գիտցան Յիսուսի խաչափայտը, որ հետագային փոքր մասերու վերածելով բաժնեցին եկեղեցիներուն:

Ի՞նչ կը նշանակէ խաչակնքել:

Խաչակնքել կը նշանակէ.

1. Վահանով պաշտպանուիլ՝ չար ներգործութիւններուն դէմ:
2. Յիշել մեր Փրկչին Խաչին վրայ մահը, մարդկութեան ազատութեան (Փրկութեան) համար:
3. Խաչակնքելով Աստուծոյ օգնութիւնն ու ողորմութիւնը կը խնդրենք, ո՛չ մեր բարի գործերուն ի պատասխան, այլ՝ խաչեալ Յիսուս Քրիստոսի գութին ապաւինելով:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ

ԱՂՕԹՔ

Քու խաչդ թող մեզի ապաւեն ըլլայ, Տէ՛ր Յիսուս, երբ Հօրը փառքով երեւիս՝ լուսաւոր ամպերու վրայ: Այն ատեն թող ամօթով չմնանք մենք՝ քեզի յուսացողներս, այլ քու մեծ գօրութեամբդ ուրախանանք՝ քու աջ կողմդ բազմած, իբրեւ լոյսի որդիներ եւ փրկութեան ժառանգորդներ:

Օգնէ՛ մեզի, Տէ՛ր, օգնէ՛ մեզի, ո՛վ մեր փրկիչ Աստուածը, քու մեծ անունիդ փառաւորութեան համար: Տէ՛ր, փրկէ՛ մեզ եւ քաւ՛ մեր մեղքերը, քու սուրբ անունիդ համար: Սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ պարսպուած եւ խաղաղութեան մէջ պահէ՛ քեզի ապաւինած եւ քեզի յուսացող ժողովուրդդ: Փրկէ՛ մեզ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ՛ որ գոհութեամբ փառաւորենք քեզ, Հօրդ եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից: Ամէն:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՄԻՆ ՀԱՒԱՏՔ

Հաւատք բառը, կրօնական առումով կը նշանակէ ամուր վստահութիւն աստուածային նշմարտութիւններու վրայ: Իսկ Պօղոս Առաքեալ այսպէս կը սահմանէ հաւատքը. «Յուսացուած բաներուն հաստատութիւնն է եւ չտեսնուած բաներուն ապացոյցը կամ ստուգութիւնը» (Եբրայեցիս ԺԱ.1):

Հաւատքը անհրաժեշտ պէտք մըն է մարդոց համար, որովհետեւ մարդոց բոլոր գործերը հիմնուած են հաւատքի վրայ: Այս երկրագունդը, որուն վրայ կ'ապրինք, լեցուն է այնպիսի իրողութիւններով՝ գորս չենք տեսներ մենք եւ չենք հասկնար, բայց գիտենք եւ կը հաւատանք, որ կան:

Երբեմն անձեր հարց կու տան եւ բացատրութիւն կը պահանջեն՝ թէ ինչպէ՞ս կրնան փաստել՝ որ Աստուած գոյութիւն ունի: Շատ պարզ է այս հարցումին պատասխանը: Ամենէն առաջ, մեր բանականութիւնն է, որ կը սորվեցնէ մեզի՝ թէ Աստուած կայ, որովհետեւ այս աշխարհին մէջ չկայ բան մը, որ չունենայ իր հեղինակը կամ պատճառը: Տուն մը առանց շինողի՝ չի շինուիր: Որեւէ գործիք մը ինքն իրեն չի կրնար գոյութիւն ունենալ: Նոյնպէս՝ այս երկրագունդը, այս տիեզերքը, իրենց գոյութեան յայտնի եւ գաղտնի օրէնքներուն հեղինակ մը, ստեղծիչ մը, արարիչ մը ունին, որուն անունը մեր լեզուին մէջ ԱՍՏՈՒԱԾ է: Այս է պատճառը, որ ես ալ կը հաւատամ՝ թէ կա՛յ ԱՍՏՈՒԱԾ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍԸԸ

Եթէ կ'ուզես գիտնալ Տիրոջ խօսքին կատարելութիւնը, սրբութիւնը եւ վստահութիւնը, միասին կարդանք՝

ՍԱՀՄՈՍ 19

Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ, երկնականաբար անոր արարչութեան կը վկայէ:

Իւրաքանչիւր օր նոյն վկայութիւնը կուտայ, ամէն մէկ գիշեր նոյն գիտութիւնը կը յայտնէ:

Չկայ ռեւէ խօսք, չկայ ռեւէ բառ, եւ ռեւէ ձայն չի լսուիր անոնցմէ. բայց ամբողջ աշխարհ կը սփռուի անոնց պատգամը, մինչեւ աշխարհի ծայրը կը հասնի անոնց վկայութիւնը:

Աստուած երկնքի մէջ բնակարան կանգնեց արեգակին, եւ սա՛ փեսայի մը պէս իր առագաստէն դուրս կուգայ, հսկայի մը պէս ցնծութեամբ իր ճամբան կ'երթայ: Երկնքի մէկ ծայրէն կը ծագի ու մինչեւ միւս ծայրը կը շրջի, եւ չկա՛յ բան մը որ անոր տապէն գերծ մնայ:

ՏԻՐՈՋ օրէնքը կատարեալ է, անձը կը վերանորոգէ.

ՏԻՐՈՋ պատուիրանները վստահելի են, իմաստուն կը դարձնեն պարզամիտները: ՏԻՐՈՋ հրահանգները ուղիղ են, սիրտը կ'ուրախացնեն.

ՏԻՐՈՋ պատուէրները լոյս են, աչքերը կը լուսաւորեն.

ՏԻՐՈՋ վախը սուրբ է, եւ յաւէտ անջնջելի.

ՏԻՐՈՋ դատաստանները ճշմարիտ են եւ միշտ արդար, ատելի ցանկալի՝ քան ամենէն զուտ ոսկին, ատելի քաղցր՝ քան մեղրախորիսխէն քամուած մեղրը:

Ես, քու ծառադ, ինքզինքս անոնցմով կը կրթեմ, որովհետեւ անոնք լիովին կը վարձատրեն պահողը:

Շարունակենք Սաղմոսագիրքէն